

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության կառավարության
2023 թվականի
_____ -ի N__-Ա որոշման

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1	Հայտատուի (կազմակերպության) անվանումը և կազմակերպաիրավական ձևը, հիմնադրման տարեթիվը	«ԱԳՐՈՊՐՈ» ՓԲԸ, 18.09.2020թ.
	Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	00226939
	Կազմակերպության բաժնետերերը	Դավիդ Ժիրայրի Սահակյան
	Կոնտակտային տվյալները՝ Անուն, հայրանուն, ազգանուն	Դավիդ Ժիրայրի Սահակյան
	Իրավաբանական հասցեն	ՀՀ, ք. Երևան, Պողոսյան փ. 2/1, 18 տարաք
	Տնտեսական գործունեության դասակարգիչը	(A) 01.24.1, (C) 11.01.1, (N) 82.92.0, (H) 52.10.0
	Հեռախոսահամարը	093106240
	Էլ. փոստը	info@agropo.am
2	Ներդրումային ծրագրի իրականացման վայրը/հասցե (ներառյալ՝ կադաստրային գոտին)	Մարզ Արմավիր, համայնք Խոյ, գյուղ Արագած, մարզ Արմավիր, համայնք Խոյ, գյուղ Ծաղկալանջ, մարզ Արագածոտն, համայնք Աշտարակ, գյուղ Արագածոտն (Արագածոտնի մարզ, Աշտարակ համայնք, գյուղ Արագածոտն գյուղի կադաստրային գոտի՝ XIV, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Արագած և Ծաղկալանջ գյուղերի կադաստրային գոտի՝ XII):
3	Ներդրումային ծրագրի համառոտ նկարագրությունը (ծրագրի նպատակը, իրականացվելիք աշխատանքները, մրցակցային առավելությունները, արտահանման ուղղությունները և քաղաքականությունը, ծրագրով նախատեսված գործունեության տեսակի հստակ նկարագրությունը՝ նշելով տնտեսական գործունեության դասակարգիչը,	«Ագրոպրո» ՓԲԸ-ն 2022-2023թթ. նախատեսում է շուրջ 90 հա հողամասի վրա հիմնել 75 հա սուպերֆինտեսիվ պտղատու այգի՝ մեկ հեկտար հողակտորի վրա տնկելով շուրջ 2,000 հատ ծառ: (Փուլային աշխատանքների բացվածքը և նկարագրությունը տրված է 4-րդ կետով): Այգեհիմնումը կատարվելու է արդիական տեխնոլոգիաների լայնածավալ ներդրմամբ: Այգու ոռոգումը կատարվելու է կաթիլային համակարգով, որը սնուցվելու է այգու

ստեղծվելիք աշխատատեղերը,
միջին աշխատավարձը և այլն)

համար կառուցված շուրջ 17,000 խորանարդ
մետր ջրավազանից: Կաթիլային
համակարգով ոռոգումը հնարավորություն է
տալիս կատարել զգալի ջրային
խնայողություններ, ինչպես նաև
ժամանակին և արդյունավետ ապահովել
այգու սնուցումը: Այգին պաշտպանված է
լինելու կարկտապաշտպան ցանցով, որը ոչ
միայն ապահովում է ծառերի
պաշտպանությունը կարկուտից, այլ նաև
արևային այրվածքներից, վնասվածքներից,
ինչպես նաև նվազեցնում է ջրի
գոլորշիացումը:

Այգին հագեցած է լինելու գերժամանակակից
գյուղատնտեսական սարքավորումներով և
գյուղտեխնիկայով: Այգու ամբողջական
կառավարումը լինելու է թվայնացված,
ինչպես նաև օգտագործվելու են GPS
համակարգից օգտվող, ինչպես նաև
ինքնակառավարվող տեխնիկաներ:

Նախատեսվում է մշակել մաքսիմալ
դիվերսիֆիկացված արտահանման
շուկաների ռազմավարություն:

Արտահանման աշխարհագրության
ընդլայնման ուղղությամբ արդեն քայլեր
կատարվում են: Բացի Ռուսաստանից,
նախատեսվում է արտահանում
իրականացնել նաև դեպի եվրոպական
երկրներ, Միջին արևելքի երկրներ և
Չինաստան: Այդ նպատակով

կազմակերպությունը իրականացնում է
Global Gap ստանդարտների
համապատասխանության սերտիֆիկատ
ստանալու աշխատանքներ:

առկայություն:

Տնտեսական գործունեության
դասակարգիչները (A) 01.24.1, (C) 11.01.1, (N)
82.92.0, (H) 52.10.0 են: Ծրագրի
իրականացման արդյունքում ստեղծվելու է
շուրջ 60 մշտական և 450 սեզոնային
աշխատատեղեր այգում: Միջին
աշխատավարձը մշտական աշխատողների
համար կազմելու է ամսական շուրջ 300,000

		<p>ՀՀ դրամ:</p> <p>Նախագծի այգեհիմնման հաստատված բյուջեն կազմում է 3.1 մլրդ ՀՀ դրամ: Մինչև 2023թ. հունվարի 24-ը արդեն իսկ կատարվել են 1.1 մլրդ դրամի ներդրումներ: 24.01.2023թ. հետո նախատեսվող ներդրումների չափը 2 մլրդ է:</p> <p>Այգուց ակնկալվող տարեկան եկամուտը լրիվ բերքատվության ժամանակ կազմելու է շուրջ 1 մլրդ ՀՀ դրամ: Շահութաբերության Ներքին Նորմը կազմելու է շուրջ 35 տոկոս:</p>
4	<p>Ներդրումային ծրագրի իրականացման, մասնավորապես՝ անշարժ գույքի կառուցման և հիմնական միջոցների ձեռքբերման (այդ թվում՝ տեղափոխման և տեղադրման) ժամանակացույցը (ժամանակացույցը կազմվում է մեկնարկի պահից սկսված) և նկարագրությունը</p>	<p>Հողային աշխատանքներ, մելիորացիա և տեղանքի պատրաստում՝ 07.2022 – 01.2023 (աշխատանքներն ավարտված են),</p> <p>Ցանքաշարահին համակարգի և հակակարկտային ցանցի ձեռքբերում և տեղադրում՝ 12.2022 – 06.2023 (անհրաժեշտ նյութերը ձեռք են բերվել, կարկտապաշտպան համակարգի սյուները տեղադրվել են),</p> <p>Կաթիլային ոռոգման և պարարտացման համակարգերի ձեռքբերում և տեղադրում՝ 12.2022 – 04.2023 (անհրաժեշտ նյութերը ձեռք են բերվել, աշխատանքները կատարված են շուրջ 80%-ով),</p> <p>Ջրավազանի կառուցում՝ 12.2022 – 03.2023 (աշխատանքները կատարված են շուրջ 90%-ով),</p> <p>Ծառատունկ՝ 04.2023 – 05.2023 (աշխատանքները կատարված են շուրջ 40%-ով),</p> <p>Գյուղտեխնիկայի ձեռքբերում՝ 06.2022 – 06.2023 (ձեռք է բերվել գյուղտեխնիկայի շուրջ 80%-ը).</p> <p>Շինությունների և ենթակառուցվածքների կառուցում՝ 15.03.2024:</p> <p>19.07.2023 թվականի դրությամբ կատարված ներդրումների ընդհանուր ծավալը կազմում է 1 827 136 403 ՀՀ դրամ:</p> <p>Ներդրումային ծրագրի ավարտը նախատեսվում է 2024թ. մարտի 15-ին:</p>

5	Նախատեսվող ներդրումների չափի և ուղղությունների նկարագրությունը (անշարժ գույքի կառուցում, հիմնական միջոցներ)	<p>Շինությունների և ենթակառուցվածքների կառուցում՝ 300 մլն դրամ, Այգեհիմնում՝ 2.87 մլրդ, ընդ որում.</p> <ul style="list-style-type: none"> Մելիորացիա և տեղանքի պատրաստում՝ 548 մլն դրամ, Հակարկտային ցանց՝ 1.095 մլրդ դրամ, Կաթիլային ռոգում՝ 276 մլն դրամ, Զրավազան՝ 150 մլն դրամ, Ծառատունկ՝ 801 մլն դրամ, <p>ԸՆԴԱՄԵՆԸ ՆԵՐԴՐՈՒՄ՝ 3.170 մլրդ դրամ Մինչև հունվարի 24.01.2023թ՝ 1.193 մլրդ դրամ արված ներդրումներ: 19.07.2023 թվականի դրությամբ կատարված ներդրումների ընդհանուր ծավալը կազմում է 1.827 մլրդ ՀՀ դրամ:</p>
6	Անհրաժեշտ ենթակառուցվածքի նկարագրությունը և դրա անհրաժեշտության հիմնավորումը	<p>Ասֆալտապատ ճանապարհի դեպի կազմակերպության այգի (մոտ 1,520 մետր երկարությամբ): Արտահանման շուկաների պահանջներին բավարարող որակով թարմ մրգի մատակարարումն այսօր գոյություն ունեցող հողային ճանապարհներով գրեթե անհնար է: Այս ճանապարհը կապասարկի նաև մոտ 200 հեկտար կից կառուցվող այգիները և մոտ 150 հեկտար գոյություն ունեցող խաղողի այգիները:</p> <p>Բջջային կապ: - Այսօրվա դրությամբ որևէ բջջային ծածկույթ տարածքում գրեթե գոյություն չունի: Հաշվի առնելով պլանավորված աշխատողների քանակը՝ տարածքում բջջային կապ ապահովելը դառնում է կրիտիկական խնդիր, որի չլուծվելու պարագայում տնտեսության արդյունավետ կառավարումն անհնար է: Բացի այդ, GPS համակարգի օգնությամբ աշխատող ժամանակակից սարքերը և մեքենաները, որոնք լայնածավալ օգտագործվում են այգում, աշխատում են բջջային ցանցով ստացված կարգավորող</p>

ագդանշանի հիման վրա, որն այսօրվա դրությամբ անհնար է ստանալ կապի բացակայության պատճառով:

Նշենք նաև, որ մոտակայքում գտնվող գյուղերում (Արագածոտն) ծածկույթը բավականին վատն է և ապահովվում է միայն մեկ օպերատորի կողմից:

Այդպիսով, բջջային կապը անհարժեշտ է ոչ միայն մեր տնտեսությանը, այլ նաև տեղի բնակիչներին:

Ինտերնետ օպտիկական մանրաթելերով:

– Ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած տնտեսության համար, որը պետք է գործի միջազգային շուկաներում, կայուն և արագ ինտերնետն առաջնային անհրաժեշտություն է: Արտաքին աշխարհի հետ կապի ապահովումը, և ամենակարևորը, կազմակերպության սերվերների աշխատանքն անհնար են առանց վերոնշյալ խնդրի լուծման:

Ռոռզման ջրագիծ:

Կազմակերպության այգիները, ինչպես նաև կից տնտեսությունների կառուցվող այգիները հիմնվում են տասնյակ տարիներ չօգտագործված կամ նույնիսկ երբեք գյուղատնտեսական նպատակներով չօգտագործված գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողամասերում: Գոյություն ունեցող ռոռզման ջրագծերը նախատեսված չեն ևս 90 հեկտար և ավել այգիների ռոռզման համար և դժվարությամբ բավարարում են գոյություն ունեցող խաղողանոցներին:

Քանի որ կազմակերպությանը պատկանող ջրավազանը գտնվում է 3 կմ հեռավորության վրա և 130 մետր բարձր է Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արագած գյուղով անցնող ռոռզման ջրանցքից, միևնույն ժամանակ, այն

գտնվում է 7.4 կմ հեռավորության վրա և 200 մետր ցածր է Արզնի-Շամիրամ ոռոգման ջրանցքից, ուստի, հետագա շահագործման տեսանկյունից ավելի բարենպաստ ենք համարում օգտվել Արզնի Շամիրամի ոռոգման աղբյուրից, ինչպես անում են ջրավազանի հարակից բոլոր այգիները:

Խմելու ջրի ջրագիծ:

– Այսօրվա դրությամբ տարածքում բացակայում է որևէ խմելու ջրի աղբյուր: Հաշվի առնելով աշխատակիցների քանակը, իրենց կենցաղային պահանջները հոգալու անհրաժեշտությունը, ինչպես նաև սորտավորման ու սառնարանային տնտեսությունների պահանջները՝ մշտական խմելու ջրի առկայությունը խիստ անհրաժեշտ է, առանց որի անհնար է կազմակերպել տնտեսության բնականոն գործունեությունը:

Էլեկտրամատակարարում:

Հոսանքի առկայությունը պարտադիր պայման է հանդիսանում այգու սպասարկման, բերքահավաքային և հետբերքահավաքային պրոցեսների ապահովման համար: Հաշվի առնելով նաև, որ այգին լինելու է հագեցած ժամանակակից տեխնոլոգիաներով, տարբեր տեսակի սենսորներով, որոնց միջոցով կատարվելու է ինֆորմացիայի հավաքագրում, վերամշակում և կառավարում, ինչպես նաև այն, որ այգու անվտանգության ապահովման համար անհրաժեշտ են տեղադրել անվտանգային համակարգեր, անհրաժեշտ է այգու համար ապահովել Էլեկտրամատակարարում: Հոսանքի գծի անհրաժեշտ երկարությունը կազմում է շուրջ 2.8 կմ հեռավորության վրա:

		<p>Աշխատանքների անհրաժեշտությունից ելնելով, 1.6 կմ հոսքագիծը ապահովել ենք, մնացել է 1.2 կմը:</p> <p>Ենթակառուցվածքների կառուցման նախընտրելի ժամանակացույցը 2024թ մարտի 15-ն է:</p> <ol style="list-style-type: none"> 1. Խմելու ջուր - 21.437.400 ՀՀ դրամ 2. Ճանապարհ - 191.520.000 ՀՀ դրամ 3. Էլեկտրամատակարարում – 27.400.00 ՀՀ դրամ 4. Բջջային կապ – 38.500.000 ՀՀ դրամ 5. Ֆիքսված ինտերնետ կապ – 12 մլն. ՀՀ դրամ 6. Ոռոգման ջուր – 92.280.000 ՀՀ դրամ <p>Ընդամենը՝ 383 137 400 ՀՀ դրամ:</p>
7	Ծրագրին վերաբերող այլ տեղեկություններ (հայտատուի հայեցողությամբ)	<p>Հավելված 1-ով ներկայացվում է անհրաժեշտ ենթակառուցվածքների գնահատված ծախսերը և երթուղիները Google Earth հավելվածի միջոցով:</p> <p>Հավելված 2-ով ներկայացվում են «ՍՄԱԸԹ ԱԳՐՈ ՍՈԼՈՒՇԸՆՍ» ՓԲԸ-ի կողմից տրված Համաձայնություններ՝ իր հողամասերի միջով անհրաժեշտ ենթակառուցվածքներ անցկացնելու համար</p> <p>Կառուցման ենթակա բոլոր ենթակառուցվածքները ենթակա են հանրային օգտագործման, բացառությամբ ոռոգման ջրի, քանի որ ջրի ճնշումը կրնկնի:</p>